



# Մ ՈՒՐԲ ԶԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԿԵՂԵՅԻ



### ԽԱՉԿԵՐԱԾԷՆ ԵՏԲ ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

### ԸՆԹԵՐՑՈՒՄ

#### ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐԳԷՆ

(17.7-14)

**Ե**րբ այն օրը գայ, մարդը իր արարիչին միայն պիտի յուսայ, իր աչքերը Իսրայելի սուրբ Աստուծոյն պիտի յառէ: Այլեւս իր յոյսը պիտի չկապէ մեհեաններուն կամ իր ձեռագործ չաստուածներուն: Մարդիկ միայն Իսրայելի սուրբ Աստուծոյն պիտի յուսան: Այլեւս իրենց աչքերը պիտի չյառեն իրենց գարշելի չաստուածուհիին փայտէ արձանիկներուն:

Այն օրը քաղաքներդ պիտի լքուին եւ աւերուին, այնպէս՝ ինչպէս պարպուեցան ամորհացիներու եւ խեւացիներու քաղաքները իսրայելացիներու յարձակումին դիմաց, քանի որ դուն լքեցիր զԱստուած, քու փրկիչդ, եւ մոռցար Տէրը, քու օգնականդ: Արդ, քանի որ քու տնկած պարտէզդ եւ ցանած սերմերդ օտար չաստուածներու նուիրուած են, ինչ որ ալ տնկես, եւ ցանածդ նոյն օրն իսկ ծաղկի՝ սակայն հունձքին արդիւնք պիտի չունենաս. այն օրը Աստուած հօր մը պէս իր ժառանգութիւնը պիտի բաժնէ, եւ դուն որպէս հատուցում՝ տրտմութիւն պիտի ունենաս:

Վա՛յ բոլոր այն ազգերուն որոնք ալեկոծ ծովու մը պէս Աստուծոյ դէմ կը մոլեգնին

եւ որոնք ալիքներու նման կը շառաչեն: Նոյնիսկ եթէ ծովերուն պէս անհամար ըլլան անոնք, ովկիանոսի ալիքներուն սաստկութիւնն իսկ ունենան՝ սակայն Աստուած պիտի ճզմէ ու ցրուէ զանոնք այնպէս՝ ինչպէս հովը կը քշէ յարդին շիւղը, ինչպէս մրրիկը կ'ալէ կառքերուն հանած փոշին:

Ողբ ու կոծով պիտի փակուի օրն իրենց, առաւօտը դեռ չբացուած՝ ա'լ գոյութիւն պիտի չունենան: Ահա ա'յս պիտի ըլլայ մեր յափշտակիչներուն, մեր կողոպտիչներուն վիճակուած ճակատագիրը:

### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

#### ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ

#### ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ

(13.5-13)

**Ք**ննեցէ՛ք դուք ձեզ, տեսնելու համար թէ նոյն հաւատքին մէջ կը մնա՞ք: Փորձեցէ՛ք դուք ձեզ. Քրիստոսի ներկայութիւնը կը զգա՞ք ձեր ներսիդին, թէ պարզապէս իր անունը կը կրէք: Յուսամ գիտէք թէ մենք այդ փորձը յաջողապէս կատարած ենք: Եւ կը խնդրենք Աստուծմէ որ չարիք չգործէք: Ասիկա ըսելով չենք ուզեր մենք մեզ ընտիր ցոյց տալ. ընդհակառակը, կ'ուզենք որ դուք բարին գործէք, նոյնիսկ մեզ ամօթով ձգելու չափ: Որովհետեւ Աստուծոյ ճշմարտութեան դէմ ոչինչ կրնանք ընել, այլ կրնանք միայն անոր համար աշխատիլ: Ուրախութեամբ յանձն կ'առնենք տկարանալ, միայն թէ դուք զօրանաք: Ուստի կ'աղօթենք որ հետզհետէ

կատարեալ ըլլաք: Ասիկա հեռուէն կը գրեմ ձեզի, որպէսզի երբ դամ՝ պէտք չունենամ խստութեամբ վարուելու ձեզի հետ ա՛յն իշխանութեամբ որ Տէրը ինձի տուաւ ուղղելու համար եւ ո՛չ թէ պատժելու:

Կը փակեմ նամակս, եղբայրներ. ո՛ղջ եղէք: Կատարեալ ըլլալու աշխատեցէք. մխիթարուեցէք: Համերաշխ եւ խաղաղութեամբ ապրեցէք իրարու հետ, եւ այն ատեն խաղաղութեան ու սիրոյ Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ:

Սիրոյ համբոյրով ողջունեցէք զիրար: Այստեղի քրիստոնեաները կ'ողջունեն ձեզ:

Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգիի հաղորդութիւնը ձեր բոլորին հետ ըլլան: Ամէն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ  
(11.27-33)

**Յ**իսուս եւ իր աշակերտները դարձեալ Երուսաղէմ եկան:  
Մինչ Յիսուս տաճարին մէջ կը պտըտէր,

իրեն մօտեցան քահանայապետները, օրէնքի ուսուցիչներն ու երէցները, եւ հարցուցին. «Ի՞նչ իշխանութեամբ կը կատարես այս բաները: Ո՞վ քեզի այդ իշխանութիւնը տուաւ»: Յիսուս անոնց պատասխանեց. «Լա՛ւ, ձեզի պիտի ըսեմ թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ ասոնք, եթէ դուք ալ իմ հարցումիս պատասխանէք: Յովհաննէսի մկրտելու իշխանութիւնը Աստուծմէ՞ տրուած էր իրեն թէ մարդոցմէ: Պատասխանեցէք տեսնեմ»:

Անոնք սկսան իրարու միջեւ խորհիլ եւ ըսել. «Եթէ ըսենք՝ Աստուծմէ տրուած էր, մեզի պիտի ըսէ թէ ինչո՛ւ չհաւատացիք իրեն. իսկ “մարդոցմէ էր” չենք կրնար ըսել»: Այսպէս կ'ըսէին՝ ժողովուրդէն վախնալով, որովհետեւ ամէն մարդ գիտէր թէ Յովհաննէս ճշմարտապէս մարգարէ էր: Ուստի պատասխանեցին Յիսուսի. «Ձե՛նք գիտեր»: Յիսուս ալ իրենց հարցումին պատասխանելով ըսաւ. «Այն ատեն ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ի՛նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները»:

ԱՅԾԵԼԵՅԷ՛Ք ԵԿԵՂԵՑԻՅԱ  
ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՁՐ  
ԵՒ ՁԵՐ ՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՎ յԱՏՆԵՅԷՔ  
(like).  
[www.facebook.com/SourpHagopChurchMontreal](http://www.facebook.com/SourpHagopChurchMontreal)

ԱՅԾԵԼԵՅԷ՛Ք ԵՎ  
Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋԱՆՈՂԱՆԻՍ ՄԱՅՐ  
ԵԿԵՂԵՑԻՅԱ ԿԱՔԷՁՐ՝  
[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)

ՏՆՕՐՀՆԷՔ  
Տնօրհնէք փափաքող ընտանիքները,  
թող բարեհաճին դիմել  
Տ. Գառնիկ Ա. Քհնյ. Գոյունեանի,  
հեռաձայնելով  
514 909 5203 քիւիմ:

ՀԻՒԱՌԱԵՐՈՒՄ ԱՅԾԵԼՈՒԹԻՒՄ  
Բարեհաճեցէք հեռաձայնել  
Արժ. Տ. Գառնիկ  
Ա. Քհնյ. Գոյունեանի.  
514 909 5203 քիւիմ: